



“ԹՈՂ ՏՈՒՆԻՔ ՄԱՆԻ ՏՂԱՅԸ ՈՐ ԻՆՏԻ ԳԱՆ.” ԴՈՒԿ ԺԸ. 16:

ՀԱՏՈՐ ԼԵ.


ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՀՈԿՏԵՄԲԵՐ 1, 1906

ԹԻՒ 10

ԽՈՒՋԱՐԿՈՒԹԻՆՆԵՐ ԲԱՐԵԼԱՍՏԱՆԻ ՄԷՋ  
 Ծննդոց ժ. դրուխ 10 համարին մէջ կը  
 կարդանք չորս քաղաքներու վրայ զո-  
 րոնք հիմնեց Ներքով թ մեծ որսորդը,  
 և անոնց մին կը կոչուի Բաղան: Ա-  
 սիկա կը կարծուի թէ Նիփուրն է,  
 ուր խուզարկութիւններ կատարուե-  
 ցան վերջին քանի մը տարիներս, և  
 գտնուած բաներէն շատը հիմա կոս-

քաղաքը կանոնաւոր ականներ և  
 կոյուղիներ ունէր հիմակուան քա-  
 ղաքներէն շատին ունեցածներուն  
 հաւասար աղէկ. Գտնուած են նաև  
 իրենց վրայ գրութիւններ ունեցող  
 զլաններ, որոնք կը ցուցնեն թէ այն  
 ատեն գիր կար: Ուրեմն կը ջրուի  
 այն առարկութիւնը թէ Հնգամասեա-  
 նը Մովսէս գրած չէ, փաստ բերելով  
 թէ Մովսէսի ատենը գիր չկար:

դնել, և այդ անունը ընտրեցին: Ուս-  
 աի իքարօղ անունով մկրտուեցայ:  
 Մարդիկ երբեմն խնդացած և վրաս  
 նայած են անսովոր նայուածքով մը,  
 երբ ըսած եմ անոնց թէ ի՞նչ է անունս:  
 Եւ կը յիշեմ թէ մարդ մը ըսաւ, «Ի՞նչ  
 տղայ», ու ես կարծեցի թէ անունիս  
 տարօրինակութեանը համար ըսաւ:  
 Օր մը երբ իբր տասնըորս տարե-  
 կան էի, զպրոցի ընկերներէս մէկը



հարցուց ինձի խնդալով, թէ գի-  
 տե՛մ, «Իքարօղ» ի՞նչ ըսել է: «Ոչ»  
 ըսի: Այն ատեն ըսաւ թէ աղէկ կըլ-  
 լայ որ փնտռեմ հասկնամ: Առա-  
 ջին պատահութիւնով փնտռեցի, և  
 հասկցայ որ փառքը վերցաւ՝ կը  
 նշանակէ, բարկութեան սարսուռ  
 մը անցաւ ներսէս: Ուրեմն այդ  
 է եղեր պատճառը թէ ինչո՞ւ  
 համար անունս լսողը կը խըն-  
 դայ, ըսի: Ես անոնց պիտի ցու-  
 ցընեմ թէ փառքը դեռ սկսած չէ  
 անդամ: Ես կա՛մ ինքզինքս մարդ  
 պիտի ընեմ, կա՛մ պիտի մեռնիմ:  
 Այնուհետև կեանքիս մէջ երբեք  
 մտքէս չելաւ այդ վայրկեանի զգա-  
 ցումս և եռանդս: Այդ ժամանակէն  
 ետքը իմ ամէն մէկ գործս իմ բոլոր  
 կարողութիւնովս կատարեցի: Շատ  
 վհատութիւններ ունեցայ, բայց  
 նպատակէս երբեք չըզդեցայ: Հա-  
 կառակ աղքատութեանս և տղի-  
 տութեանս, ես յառաջ կ'երթայի  
 ամէն դժուարութեան դէմ կուռե-

տանդուպոլիս կայսերական թան-  
 գարանն են: Այս պատկերը կը ցու-  
 ցնէ տաճարի մը մէկ մասը ինչպէս կ'ե-  
 ըի, վասն զի դեանէն հանուած է:  
 Հաճելի է մտածել թէ կը նայինք  
 գործի մը վրայ զոր ֆրիստոսէ զրե-  
 թէ 4.000 տարի առաջ ապրած մարդիկ  
 կառուցած են: Այդ Նիփուրը արդէն  
 հին քաղաք էր Աբրահամի ժամանակ:  
 Երկրախոյզները գտած են թէ այդ

ԻՐ ՅԱՋՈՂՈՒԹԵԱՆ ՊՍԵՃԱՌԸ  
 Գործէ քաջուած շատ յարգի և յա-  
 շողակ վաճառականի մը անդամ մը  
 հարցուեցաւ թէ ի՞նչ է կեանքի մէջ  
 իր յաջողութեան պատճառը: «Կար-  
 ծեմ ծնողքիս ինձի դրած անունն  
 է», պատասխանեց: «Չեր անո՞նք»,  
 «Այո», առաջին անունս, գիտէք,  
 իքարօղ է: Հայրս և մայրս ու-  
 ղեցին ինձի Սուրբ Գիորգէն անուն մը

լով: Կեանքի մէջ ի՞նչ յաջողութիւն որ  
 ունեցայ, ունեցայ այդ անունին հա-  
 կառակ կեանքով ապրելու որոշումիս  
 շնորհիւ, և եթէ չունէնայի այդ անու-  
 նը, պիտի չընէի այդ որոշումը: Ծնողքս  
 ճշմարիտ մղում մը տուին ինձի զիս  
 իքարօղ անունանելով:»

—•••••

ՍԻՐՈՑ ԱՊԱՑՈՑՅՈՐ

Սիրոյ անկեղծութեան իրական փորձը սա է որ անհկա մեզ ծառայելու յօժար կ'ընէ: Կրնանք ըսել թէ մենք մեր երկնաւոր Հայրը կը սիրենք մեր բոլոր կարողութեամբ, մեր բոլոր մաքրով և ուժով. բայց ուրախութեամբ կը վերցնենք ծանր բեռերը անոր սիրոյն համար:

Փոքրիկ տղայ մը յայտարարեց թէ ինք իր մայրը կը սիրէ «իր բոլոր սոցո՞ժովը»: և հարցուեցաւ թէ այդպէս ըսելով ինչ հասկցնել կ'ուզէ: Ինչ մը մտածելէն ետքը, ըսաւ.


«Ըսեմ ձեզի, կը տեսնէք որ մենք հոս վերը կը բնակինք չորրորդ յարկը. և չկայ վերամբարձ (էլէվատոր), և ածուխը վարի յարկը պահուած է: Մայրս ստակալի կերպով զբաղած է միշտ, և շատ զօրաւոր չէ, և կը տեսնէք որ ածուխին ամանը երբեք պարապ եղած չունի: Ես բոլոր ածուխը վարէն սանդուղներէն վեր կը կրեմ և չորս անգամ իջնելով ելլելով կը լեցնեմ ածուխին ամանը, և կը տեսնէք որ անհկա բաւական խոշոր է: Ասիկա է ամէնը որ կրնամ ընել ածուխը վեր հոս բերելու համար: Ասիկա մայրս իմ բոլոր ուժովս սիրել չէ:»



ԻՆՔՆԱՇԱՐԺԸ

Հոս կայ տեսակ մը կառք որ առանց ձիու կը քայլէ, և զոր մեր փոքրիկ ընկերացիներէն քիչեր տեսած են, բայց որ հիմա շատ կը գործածուի Եւրոպայի և Ամերիկայի մէջ. կան երկաթուղիներ որոնց վրայ մեքենաները ելեկտրականութեամբ կը մղուին: Ելեկտրական հոսանքը կը վազէ երրորդ երկաթ ձողի մը վրայէն որ միւս երկուքին մէջտեղ գրուած է: Կան ելեկտրական թրամուէյներ, որոնց մէջ ելեկտրական հոսանքը կը վազէ մէջի մը վրայէն կամ կառքին վերի կողմէն հեռագրական թելի նման և կամ գետին ներքեւէն և երկաթ ձողերուն մէջտեղէն. ինչպէս են Նիւ Եորք քաղաքին թրամուէյները: Բայց այս կառքը հասարակ ճամբաներու վրայ քայլելու համար չինուած է: Ճամբաները պէտք է որ աղէկ չինուած ըլլան: Հեծանիւին ու ինքնաշարժին հնարուելուն օգուտներէն մէկը ճամբաներուն լաւ չինուելն եղած է: Հեծանիւ և ինքնաշարժ գործածողները պատրաստ են աւելի տուրք վճարել որպէս զի ճամբաները լաւ չինուին և աղէկ պահուին: Ինքնաշարժներուն անիւները ձգախիժէ շրջանակ ունին, այնպէս որ հարթ գետնի վրայ կը քայլեն առանց ճունչելու կամ ունէ ձայն հանելու: Մրցման ատենները

անոնց ստակալի սրնթացութիւն կը տրուի, երբեմն ժամը մինչև 130 հազարամետր և առկէ ալ աւելի: Շարժիչ ոյժը ելեկտրականութիւնը չէ միշտ, այլ երբեմն կազ մը որ կազովին կը կոչուի, երբեմն ալ ուրիշ բան մը: Ետեի անիւը, որ կը տեսնուի պատկերին մէջ, բուն կառքին չվերաբերիր: Մեքենայ մըն է կառքին կցուած, տեսակ մը աստիճանացոյցով, փորձելու համար այլևայլ տեսակ ճամբաներուն ընդդիմութիւնը: Այսինքն հասկնալու համար թէ կառքը ո՞ր տեսակ ճամբան վրայ կը վազէ ամէնէն աւելի դիւրութեամբ, և թէ ինչ տարբերութիւն կայ այս մասին այս և այն տեսակներուն մէջտեղ:




ԹՈՒՄԻԿԻ ԴՐԱԾ ԿԱՆՈՆԸ

«Տղայ, կ'ուզե՞ս քսաննոց մը վաստելիլ»: Ըսաւ գործարանի մը մարդոց մէն մէկը: Թուովիկ, նոր վարձուած տղայ մը, ցատկեց մարդուն քով վա-

քեզի համար: «Պէտք է որ ընես ինչ որ ըսուեցաւ», ըսաւ առաջին խօսողը: Մեր պետը քեզ հոս դրաւ որպէս զի երթաս ուր որ զրկենք քեզ գործի համար: Հիմա կ'առնես այդ ամանը և հոս չես երևիր մինչև որ զանիկա լեցուն չբերես: Կը ըսե՞ս:» Եւ ամանը տղուն ձեռքը խոթուեցաւ: Դրան դուրսի կողմը թուովիկ վարանեցաւ վայրկեան մը և սկսաւ սաստիկ խորհիլ: «Նորսի մարդը պետը չէ՞», ըսաւ ինքնիքին: «Հարկաւ եթէ գայ և ինծի ըսէ որ հրամայուածը ընեմ, նոր տեղ մը պիտի փնտռեմ, բայց դրաւ պիտի չերթամ ասկէ:»

Թուովիկ անհիւնէն անցաւ և շիտակ զլխաւոր մտաքը գնաց և սանդուղին լայն աստիճաններէն վեր ելաւ դէպի վերամբարձը: Վերամբարձին հսկող տղան զանիկա առաջնորդեց սրահ մը ուր կարևոր նիստ մը ունէին նախագահը, փոխնախագահը, ատենադպիրը և գանձապետը: Թուովիկ հա-



զեց, մը տղան չէր ուզեր վաստկիլ, «Ճիշտ սա անկիւնի գինետունը գնա, և սա ամանը լեցնել տուր և բեր: Ահա քսաննոցը: Մենք քեզի պիտի վճարենք երբ բերես գինին:» Ըսաւ մէկն այն մարդոցմէն որոնք խուճի մը կազմուած իրենց կէսօրուան ճաշը կ'ընէին սրահին մէկ անկիւնը: Թուովիկ երեսը կաս կարմիր եղաւ և, «Ես չեմ կրնար ըներ ատիկա», ըսաւ: «Ինչո՞ւ չես կրնար. սաչափ տեղէն չե՞ս կրնար աման մը գինի բերել:» «Դժուարութիւնը ճիշտ սա է», պատասխանեց Թուովիկ բոցալուծուած աչքերով: «Ես առկէ ալ շատ աւելի ծանր բեռ բերելու չափ ոյժ ունիմ: Եթէ հարկ չըլլար, ես հոս պիտի չգործէի, ընելու համար ինչ որ հայրս պիտի ընէր, այսինքն հոգալ մայրս և պղտիկները: Եւ ես հիմա գպրոցը պիտի գտնուէի ուրիշ տղոց նման:» «Աղէկ կ'ըլլայ որ այս անգամ ընես ատիկա», ըսաւ բարբարոյ երիտասարդ մը, «եթէ ոչ վերատեսուչին պիտի գանգատինք

մարձակութեամբ զարկաւ դուռը, որ երբ բացուեցաւ, ինքզինք գտաւ սրահի մը մէջ վեհ երևոյթ ունեցող անձնաբու առջև, իրօք վեհ՝ զգեստներով, այնպէս որ Թուովիկ աչքերը վար խոնարհեցուց յանկարծ անցած իր ցնցոտի հանդերձներուն վրայ նայելով:

«Տղաս, ինչ ունիս», հարցուց մարդոցմէն մէկը որ կ'երևէր թէ պետն էր: «Թուովիկ է անունս, գործարանին ծառայող նորեկ տղան եմ», ըսաւ Թուովիկ համարձակօրէն: «Ես դեռ երէկ եկայ, և այն մարդիկը կ'ըսեն որ այս ամանը առնեմ և գինիով լեցնել տամ, եթէ ոչ՝ չուտով պիտի արձակուիմ: Ես հոս եկայ գործարանին բուն պետը գտնելու: Ըսէք, այնպէս է: Ես անոնց գինի բերելու եմ:»

Մարդը լըծօրէն նայեցաւ տղուն անձկոտ երեսը. և պատասխանեց ուրիշ հարցումով մը:

«Դիպուք թէ բերելու ես, ինչ պիտի ընես, տղայ:»

Կայծակի արագութեամբ սա պա-

տափանք տուաւ տղան ակնածու բայց եռանդուն շնչով:

«Ինչ պիտի ընեմ. կարծեմ ուրիշ բան չունիմ ընելու, բայց միայն ուրիշ գործ միտառել: Ես գինիի գործ պիտի չընեմ ուէ մէկուն:» Սենեակին մէջ հաւանութեան զօգուած մը մտնել մը տարածուեցաւ:

«Եւ, տղաս, մեղմէ ոչ մէկը գինիի հետ գործ ունի, և կարծեմ ժամանակ է որ մենք քանի մը խիստ կանոններ դնենք և մեր շէնքին մէջ փակցնենք նոյն իսկ այդ բանին համար: Դուք ինչ կ'ըսէք,» հարցուց սրահին մէջ գտնուած միւս պարոններուն:

«Այն թելագործ որ անմիջապէս այսպիսի ազդ մը գրուի զրի մեքենայով և օրինակ մը դրուի այդ ամանին մէջ և ետ զրկուի այս պատանին ձեռքով, Այն ատեն մարդիկը բան չեն կրնար ըսել ամանին պարսպ վերադարձուելուն համար:»

Օրը իրիկուն չեղած՝ շէնքին ամէն կողմը յիշեալ ազդէն փակցուեցաւ թէ այդ սահմաններուն մէջ արգելուած են գինի և ուրիշ ուէ ոգելից ըմպելի: Գործարանին նախագահը այս տղան չմտցաւ, և երբ քանի մը օր ետքը նոր տղայ մը պէտք եղաւ պաշտօնատան վերին մասին մէջ, լուր զրկեց գործարանին վերատեսչին թէ պէտք ունի այն տղուն և կ'ուզէ որ իրեն զրկէ զանիկա: Եւ թէպէտ անուն չտուաւ, բայց վերատեսուչը ժպտեցաւ, յայտնի ընելով թէ գիտէր տղուն ով ըլլալը, և բարձրաձայն պոռաց, այնպէս որ ամէնն ալ կրնային լսել: «Թու՛միկ, նախագահը կ'ուզէ որ իր գրասենեակն երթաս:»

-----

ՅԱՆՆԻ ՔՐՈՂՊԻ

Այս Ամերիկացի տիկինը որ հիմա 83 տարեկան է, իր կեանքով ցուցած է թէ կոյր մը որչափ բան կրնայ ընել: Յանի Գրոզպի, երբ միայն վեց շաբաթուան էր, աչքերու հիւանդութիւն մը ունեցաւ և, կամ աղէկ չգարմանուելով կամ հիւանդութեանը անբուժելի ըլլալուն համար, կոյր եղաւ: Բոլորովին չկուրացաւ, վասն զի տակաւին կարող է գիշերը գերեկէն որոշել: Բայց միայն այդչափ: Ան միշտ պահեց իր զուարթ բնաւորութիւնը, և երբ միայն ութ տարեկան էր, գրեց,

«Ո՛հ, ինչ երանքի հոգի եմ ես, թէն չեմ կարող տեսնել: Որչա՞ծ եմ թէ այս աշխարհին մէջ Գո՛հ պիտի ըլլամ: Որչա՞փ շատ օրհնութիւններ կը վայելեմ Ձեր ուրիշներ չեն վայելեր, Լալ և հառաչել կըլը ըլլալու համար Ձե՛մ կրնար և չե՛մ ուզեր:»

Անգղիերէնի մէջ ասիկա անյանգ ոտանաւոր է: Կեանքի վրայ միշտ զուարթ տեսութիւն ունեցած է Յանի Գրոզպի, և բանաստեղծութիւն գրելու իր մանկութեան ժամանակի սէրը պահեց բոլոր իր կեանքին մէջ: Շատ երգեր աւելցուցած է Անգղիերէն երգարանին մէջ, և կ'ըսուի թէ Անգղիոյ և Ամերիկայի մէջ անոր երգերէն իբր հարիւր միլիոն օրինակ ծախուած է: Ան մեծ բանաստեղծ մը չէ: Յօրինած երգերը վսեմ չեն, բայց պարզ, անուշ և եռանդուն են, ճիշդ այն տեսակ երգեր որոնք սիրելի են հասարակ մարդոց և մանուկներու: Այս անոր երգերէն երկուքը, որ թարգմանուած են Հայերէնի, «Փրկչի սրբազուկներուն մէջ», «Յիսուս, միշտ հողիս պահէ:»



Ամուսնացաւ 1858-ին և եղաւ Տիկին Աղթին, և ամուսնութիւնը երջանիկ եղաւ, բայց ինք աւելի կը սիրէ Յանի Գրոզպի անունով ճանչցուիլ: Անոր առաջին երգը չհրատարակուեցաւ մինչև որ ինք քառասուն տարեկան չեղաւ: Չենք գիտեր թէ ճիշդ քանի երգ գրած է, բայց անոնց թիւը մեծ է: Տան մէջ ամէն կողմ կը պտրտի և ինք կը յարգարէ իր արդուգործը առանց ուրիշի օգնութեան: Միշտ զբաղած է գուլպայ ևն: հիւսելու երբ կը նստի, և է փայլուն խօսակցող և սրախօս: Անոր զուարթ ծիծաղները տունը կը լեցնեն, և ամէն մարդ կը հմայուի անոր ուրախ, սիրող կողմերէն, և կ'ըսուի թէ կանանց ժողովներու մէջ խօսած ատենը հազուագիւտ պերճախօսութիւն և իր ունկընդիրները խնդացնելու կամ լացնելու մեծ կարողութիւն ունի:

-----

«ԿԵՍ ՏԱՂԱՆԴՍ»  
Քրիստինէի հօրեղբայրը զանիկա հրաւիրած էր որ երթար և ուսուցչութիւն ընէր հեռուոր գեղի մը մէջ: «Մեր է եկեղեցին, հօրեղբայր,» հարցուց Քրիստինէ, նախաճաշի ատեն, հոն հասնելուն յաջորդ առաւօտը: «Եկեղեցի չկայ,» ըսաւ հօրաքոյր Աննա, հօրեղբորը կողմանէ, տխուր ձայնով մը: «Երկու երեք անգամ եղած ջանքերուն հակառակ չկրցինք եկեղեցի մը ունենալ: Չկայ առիթ մը որով սկսուի: Բայց դուն հիմա առիթն ունիս սկսելու:» Շարաթ մը հաղիւանցաւ և ահա Քրիստինէի առջև ելաւ պատեհութիւն մը: Պատմութիւններ կ'ընէր վազանձներու միջոցին բոլոր շաբթուան մէջ, նաև առաւօտները և գիշերները: Ուրբաթ գիշեր աշակերտները խնուր էին: «Շարունակելի պատմութիւնը» շատ հրապուրիչ էր: Քրիստինէի միտքը փայլուն խորհուրդ մը եկաւ, և ինք հրաւեր մը ըրաւ: «Կիրակի իրիկուան դէմ եկէք և ձեզի աղուոր պատմութիւններ պիտի ընեմ ըսաւ: «Շարունակելի»ն:» «Այո, բայց ոչ թէ ասիկա,» ըսաւ Քրիստինէ, մտածելով Գործք Առաքելոցին վրայ, և կ'ուզէր զիցազնի կենսագրութիւն մը պատմել, որ կը յուսար թէ բաւական ազդեցութիւն պիտի ընէր: Տունէն ներս վաղեց աչքերը պայծառացած: «Հօրաքոյր Աննա, ես ձեր խոհանոցը կ'ուզեմ գործածել,» Քիչ մը խօսակցելէ ետքը քանի մը պատրաստութիւններ եղան: «Հոգ չէ, առանց արժուի ալ կ'ըլլայ: Մտուկներ և անուրի ամաններ կան: Տախտակամածին վրայ գտնուած ուէ բան կրնայ իբրև արժու ծառայել որուն վրայ կարելի է նստիլ,» ըսաւ Քրիստինէ: Բայց հօրաքոյր Աննա նշմարեց թէ վերջապէս նոր բան մը պիտի սկսուէր: «Բաւական արժուներ կան դրացիներ տունը, պէտք է զանոնք փոխ առնել,» ըսաւ, ինք ունէր հիւրանոցի պղտիկ երգիոն մը որ ամէն օրուան նստելու սենեակը բերուած էր, և ուստի բաւական մօտ կը գտնուէր երգի գործածուելու համար: Խոհանոցը տանը ամէնէն մեծ սենեակն էր, և ըսաւ թէ կրնայ ծառայել ժողովի համար: Քրիստինէ յուսահատելու չէր: Ճշմանք անմիջապէս ետքը սկսան գալ «չատեր,» ինչպէս գրեց անիկա: Եկողներուն տեղ կը ցուցնէր զուարթութեամբ, և դրանք քով կեցաւ մինչև որ ամէնէն ետքը եկողը նստաւ, և սպասեց պատմութեան ժամանակին:

Մեծ և փոքր և միջահասակ եկան, վասն զի շարժումն մէջ ֆրիստինէի պատմութիւններուն համարան ելած էր:

Յաջորդ շարժումն խոհանոցը պղզտիկ եկաւ: Եւ պատճառն էր հիւրանոցի երգիչին ընկերակցութեամբ լաւ երգեցողութիւնը: Ա. Էլի տարէց մարդիկ ալ կը գտնուէին հոն: Կային մայրեր իրենց գիրկը պզտիկներով, և ասոնց քոյրերը որոնք հոգ կը տանէին պզտիկներուն: Ոչ միայն պզտիկ տղաք, այլ բաւական մեծցածներ, պատանիներ, ալ ներկայ կը գտնուէին: Բայց ամէնը միասին աշխոյժով կ'երգէին և «Գործոց» պատմութիւնը կը շարունակուէր:

«Գործոց» ըմբացաւ, հօրաքոյր Աննա, ըսաւ ֆրիստինէ գիրքին աւարտելէն ետքը: «Կ'ուզեմ շատ պզտիկներու կարգ մը կազմել և Աւետարանէն պատմութիւններ ընել Յիսուսի վրայով: Շատ չանցած այս պատմութիւնները լսելու համար հաւաքուող խումբը կիրակնօրեայ դպրոցի փոխուեցաւ: Ասիկա դժուար չեղաւ: Գեղեցիկ լրագիրները և դասագիրքին թուղթերը շուտով բաժնուեցան ներկաներուն, և պատմութիւն խօսելու ժամանակը բնական և դիւրին կերպով մը սահեցաւ անցաւ կիրակնօրեայ դպրոցի ձևի մտած: Աւելի ընդարձակ տեղ մը փնտռուեցաւ քան որչափ կը գտնուէր այն փոքրիկ տան մէջ մայրիներուն մէջերը: Եւ այդ բաղձալի տեղը ձեռք բերուեցան, այսինքն ընդարձակ և դատարկ դպրոցի շէնքը:

«Շատ ուրախ եմ», ըսաւ մանախումբին նախագահը սրտագին, երբ ֆրիստինէ արտոնութիւն կը խնդրէր անկէ: «Աղջիկս ինձի պատմած է քու իրենց պատմած պատմութիւններէդ մէկ քանին: Ի՞նչ աղուոր են անոնք: Առաջ զնա: Ես ալ ժամանակաւ կ'երթայի կիրակնօրեայ դպրոց, երբ տակաւին պատրաստ չէի կրօնական բաներէ:»

«Գիտէ՞ք թէ ի՞նչ կը նշանակէ այդ մայր», զրեց ֆրիստինէ աշխոյժով իր կիրակի գիշերուան նամակներէն մէկուն մէջ: «Կրնա՞ք երևակայել: Չէ՞ք տեսներ փոքրիկ եկեղեցին զոր պիտի ունենանք օր մը, իր բարձր, ճերմակ զանգակատունով, և զանգակ մը անուշ, զուարթարար ձայնով, որ այս տխուր բլուրներուն բնակիչները Յիսուսի քով հրաւիրէ: Ո՛հ, մայր, պատմութիւնները շատ չեն, բայց, ինչպէս հօրաքոյրս կ'ըսէ, անոնք սկզբնաւորութեան պէս բան մըն են, սեպ ներս մտնելու համար: Գիտէ՞ք որ միշտ

պէտք է բան մը: Եւ ասիկա իմ բաժինս է: Ուրախ եմ որ հասկցայ, թէ իմ փոքրիկ կէս տաղանդս օգտակար եղաւ:»

«ՓՈՅՏ ԱՌԷՔ»

Այսօրուան երիտասարդները, ըսածերուն վաճառական մը, չեն կրնար գաղափար մը ունենալ թէ ասկէ յետոն տարի առաջ ի՞նչ դժուարութիւններ ու վտանգներ կային ճամբորդութեան մէջ: Կը յիշեմ ճամբորդութիւն մը զոր ըրի 1833ին: Կարևոր ձեռնարկի մը մէջ յաջողութիւնս այսինչ քաղաքը այսինչ օրէն առաջ հասնելէս կարեալ էր:

Նոյեմբերի վերջին օրերն էին, Յուրաք ստակալի էր: Գետի ճիւղը ուն վրայ կը ճամբորդէիք, լեցուն էր լողացող սառի խոշոր կտորներով, և մտալուս վտանգ կը տեսնուէր թէ մեր ճամբան պիտի գոցուէր մեծ գետին հասնելէս առաջ: Եթէ այդպէս ըլլար, պիտի չկրնայի հասնիլ յիշեալ քաղաքը: Ընդարձակ անապատներ կային ճամբուն վրայ, և փոթորիկները յաճախ կը պատահէին և սաստիկ էին:

«Պիտի յաջողի՞նք, նաւապետ», հարցուցի, մինչ կը կայնէի նաւապետին քով շոգենաւին տախտակամածին վրայ, դիտելով որ շոգենաւը դժուարութեամբ ճամբայ կը բանար սառերու զոնդուածներուն մէջէն: «Չեմ գիտեր», պատասխանեց մարդը, ճամբան գրեթէ գոցուած է սառէն: Եթէ այսօր յաջողինք մեր ճամբան կտրել և անցնիլ աւելի տաք ջուրի մէջ, ապահով կ'ըլլանք: Բայց սառը սաստկանալու վրայ է վայրկեանէ վայրկեան:» Ես կը դողայի յուզումէս: Իմ ապագաս մեծ մասով կախեալ էր այս փայտ բեռացած հին շոգենաւէն: Ինձի այնպէս եկաւ թէ շոգենաւը կը սողար, վերջապէս կեցաւ: Դեկը յատկապէս հակառակ կողմը դարձուեցաւ: Շոգենաւը սարսեցաւ, ջուրին ելլող գնաց, կեցաւ: Տախտակամածին ելլող ցատկեցի: Դեկավարը անգործ կեցեր էր, նաւապետը և գրագիրը կը շողակրատէին իրարու հետ:

«Ի՞նչ եղաւ», պոռացի: «Ինչո՞ւ կը կենաք. ես կորսուած եմ եթէ յառաջ չերթաք:» «Մենք հիմա փայտ կ'առնենք, վառելանիւթ պէտք է», ըսաւ ղեկավարը: Տախտակամածին մարդիկը վարը փայտ կը նետէին շոգենաւին մէջ գետեզերքը գտնուած դէզէ մը, իրենց շարժումները ընկերացնելով ցած, մեղամաղձոտ եղանակի մը հետ:

Անհամբերութենէս կը կատգէի: Իւրաքանչիւր կորսուած վայրկեան մէյնէկ քայլ կը համարէի դէպի աղէտ մը: Շոգենաւը նորէն ճամբայ

եկաւ կէս ժամէն: Բայց այդ գիշեր երկու անգամ կեցաւ փայտառնելու, որ կը խորհէի թէ մեծ ժամավաճառութիւն էր: Սակայն երբ առաւօտ եղաւ, ահա շոգենաւը յաղթանակաւ անցած էր սառի կտորներուն մէջէն և ազատ ջուրին մէջ մտած էր: Մեր ճամբան շարունակելու միջոցին երկու շոգենաւեր տեսանք որոնք սառի կոյտերուն մէջ բռնուած էին: «Անոնք բաւական վառելիք չունին իրենց մեքենաները բանեցնելու», ըսաւ նաւապետը: «Անոնք չուզեցին կանգ առնել մինչև երթային վերջին կայարանը: Ասոր նման ճամբորդութեան մը մէջ պէտք է որ արտորաս բայց կամաց կամաց, եթէ կ'ուզես յաջողիլ:»

Ես շատ անգամ կը խորհիմ նաւապետին այս ըսածին վրայ, երբ կը տեսնեմ եռանդոտ և յուսալից երիտասարդներ որոնք կը սկսին իրենց կեանքի ընթացքը: Անոնք չափազանց եռանդուն և չափազանց անձկոտ են: Չեն ուզեր կանգ առնել վառելանիւթ ստանալու համար: Երբ կը տեսնեմ պատանի մը, նիհար և դեղնած, և իր գիրքերուն վրայ ծռած, որ կ'արտորայ գոյէճին մէջ իր պատկանները կամ արուեստի մը մէջ իր աստիճանը ձեռք բերել, փափաք մը կը զգամ անոր ըսելու, «Քիչ մը կանգ առ, տղայ, գնդակ խաղա, պտոյտ ըրէ, քնացիլ: Դուն կը վառես կը հատցնես մարմինիդ մէջի վառելանիւթը: անոր տեղ ուրիշ ալ ստացիր:»

Երբ կը տեսնեմ միջահասակ մէկը որ գիշեր ցերեկ խեղճ միտքը բանի մը տուած է, առևտուրի, գիրքերու, գրելու կամ մինչև անգամ քարոզչու, կը խորհիմ, «Դուն կը վառես կը հատցնես բոլոր վառելանիւթդ: Կեցիր, միւս մարդոց մէջ գնա, նոր դադար փարներ, նոր եռանդ ընդունէ, արտորա կամաց կամաց:»

Բայց մանաւանդ երբ կը տեսնեմ մարդիկ որոնք ֆրիստինէութիւն կը դաւանին, և ուրիշ հրահանգութիւն չեն ստանար իրենց ամէնօրեայ կեանքին համար, բայց միայն շարաթը անգամ մը քարոզ, կ'ուզեմ ըսել անոնց, «Դուք պէտք է որ վառելանիւթ ընդունիք: Կարգացէք ձեր Աստուածաշունչը: Աղօթքը զանց մի ընէք: Դուք չէք կրնար հոգևոր յառաջդիմութիւն ընել լոկ բարի դիտաւորութիւններով: Փայտ առէք, եթէ ոչ չարժիչ զօրութիւնը պիտի հատնի, և բարի կեանքը կանգ պիտի առնէ իր երկնային ճամբորդութեան ճամբուն վրայ, սառին մէջ բռնուելով:»

Տարեկան բաժանորդագրին՝ 6 դր. արծաթ կանխիկ, ամէն տեղոյ համար:  
Ամերիկայի Միտիանարայ Ընկերութեան կողմէն Արտոնատէր ձ. Բ. ԿԻՒՆ  
Տնօրէն—Խմբագիր Է. Ս. ՊԱՐՆԸՄ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒԳՈՒԼԻՍ  
Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՅԱՅՈՒ ՊՈՅԱՆՆԸ  
Ձինճանճլար Եզուչու, Ամերիկան Խան